



Ծնվել է 1921թ մայիսի 21-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Սարդարաշեն գյուղում: Ավարտել է տեղի 7-ամյա դպրոցը ,աշխատել է գյուղի կուլտնտեսությունում որպես այգեգործ:1942 թ զորակոչվել է Սովետական բանակ `Հյուսիսային Կովկասի Մազդուկ քաղաք: Ծառայել է հետևակային զորքերում , եղել է սկանանետային գումարտակի հրամանատար: 1946թ զորացրվելով վերադարձել է հայրենի գյուղ ,շարունակել աշխատել: Այնուհետև տեղափոխվել է Բաքու `աշխատելով նավթամշակման արդյունաբերության մեջ : Հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է բազմաթիվ մեդալների և շքանշանների: Ունի 3 զավակ և 3 թոռ: